ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հունվարի 2022 թվական թիվ 30 - Ա

ԱՐԵՎԻԿ ՀՄԱՅԱԿԻ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆԻՆ <<ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՊԱՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածով և 16-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի թիվ 319-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 44-րդ կետով, հիմք ընդունելով <<Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Այգեպարի միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն>> պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի 2021 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 7 նիստի արձանագրությունը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ներկայացուցչի եզրակացությունը և Ա Արզումանյանի դիմումը՝

ո ր ո շ ու մ եմ.

Արևիկ Հմայակի Արզումանյանի 2022 թվականի հունվարի 24-ից նշանակել <<ՀՀ Տավուշի մարզի Այգեպարի միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում և կնքել աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով:

ՄԱՐԶՊԵՏ՝ Հ. ՂԱԼՈՒՄՅԱՆ

24.01.2022

X

ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ

2022թ հունվարի 24
ք. Իջևան